ՀՈԴՎԱԾՆԵՐ · СТАТЬИ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարը, որ մեր ժամանակի կարևորագույն իրադարձությունն է, տվեց արդի դարաշրջանի բնույթի ու հիմնական բովանդակության մարքս-լենինյան վերլուծությունը, այն բնորոշեց որպես կապիտալիզմից սոցիալիզմին և կոմունիզմին անցնելու, համաշխարհային երկու քաղաքական սիստեմների պատմական մրցության դարաշրջան, սոցիալիստական ու ազգային-ազատագրական հեղափոխությունների, գաղութատիրության կործանման դարաշրջան, հասարակական զարգացման գլխավոր շարժիչ ուժերի՝ համաշխարհային սոցիալիզմի, բանվորական ու կոմունիստական շարժման, ազատագրված պետությունների ժողովուրդների, մասսայական դեմոկրատական շարժումների, իմպերիալիզմի, ագրեսիայի ու ճնշման նրա քաղաքականության դեմ դեմոկրատիայի ու սոցիալական առաջադիմության համար մղվող պայքարի դարաշրջան։

Համագումարը տվեց ժամանակակից էպոխայի բոլոր սկզբունքային հարցերի համոզիչ պատասխանը, բացահայտեց համաշխարհային զարգացման օրինաչափությունները և միջազգային լարվածության պատճառները, նշեց պատմության ամենավտանգավոր ժամանակաշրջանից մարդկության դուրս գալու ուղիներն ու միջոցները։ Նա տվեց սովետական հասարակության զարգացման ներկա բեկումնային սահմանագծի բնութագիրը, բազմակողմանի հիմնավորեց ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումի նշած՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման կուրսը, որը նախատեսում է ամենից առաջ տնտեսական աճի տեմպերի բարձրացում, ենթադրում է հասարակական հարաբերությունների կատարելագործում, քաղաքական ու գաղափարական ինստիտուտների աշխատանքների ձևերի ու մեթոդների նորացում, սոցիալիստական դեմոկրատիայի խորացում, ինքնքիայի, լճացման ու պահպանողականության, այն ամենի վճռական հաղթահարում, ինչը կասեցնում է հասարակական առաջադիմությունը։

Եվ միանգամայն օրինաչափ է, որ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ՍՄԿԿ Կենտկոմի քաղաքական զեկուցումը XXVII համագումարին, համագումարի ընդունած ՍՄԿԿ ծրագիրը (նոր խմբագրությամբ) և կանոնադրությունը, ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թթ. և մինչև 2000 թ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները և մյուս պատմական կարևորագույն փաստաթղթերը ամենուր գտան կոմունիստների, աշխատավորական կոլեկտիվների ջերմ պաշտպանությունը, դարձան գործողության ծրագիր։

Համագումարի փաստաթղթերը հանդիսանում են հզոր ազդակ և խթան գաղափարախոսական աշխատանքի համար։ Նրանք հեղափոխական մտքի և հեղափոխական գործունեության ոգևորիչ աղբյուր են, գիտական սոցիալիզմի պրակտիկ ձուլումը մասսաների սոցիալիստական պրակտիկայի, սոցիալիզմի կատարելագործման և կոմունիզմին անցնելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նրանց պայքարի հետ։ Համագումարը ցույց տվեց հաջողություններն ու սխալները ռեալ գնահատելու, պատմական փորձից դասեր քաղե-

լու, աշխատանքի ձևերն ու մեթոդները, ոճը վճռականապես նորացնելու կուսակցության ընդունակությունը։ Կոլեկտիվ ջանքերով համագումարը հարստացրեց մեր իմացությունը կուսակցության ղեկավարման լենինյան սկզբունքների, աշխատանքի ոճի ու գործունեության, բարոյական նորմերի մասին։ Դրանով իսկ համագումարը մեծապես նպաստեց հասարակության մեջ նոր բարոյա-հոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, քաղաքական մտածելակերպի վերակառուցմանը, արդյունավետ, ստեղծարար աշխատանքի հաստատմանը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության զարգացման կարևորագույն, արմատական օրինաչափությունների հիմնախարիսխներից մեկը եղել և մնում է մարքս-լենինյան տեսության և պատմական փորձի միասնությունը։ Այդ պատվարի վրա կուսակցությունը կառուցում է իր քաղաքականության գիտական հիմնավորվածությունը, ամեն կերպ ակտիվացնում մարդկային գործոնը, մեծ նշանակություն տալիս գաղափարական-տեսական, քաղաքական-դաստիարակչական, կազմակերպական և տնտեսական աշխատանքի միասնությանը։

Գաղափարական ներգործության ուժը կուսակցությունը տեսնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական քայլերի հետ նրա միացման մեջ, գաղափարախոսության ճշմարտության, քաղաքականության սկզբունքայնության, մարդկանց հավատի մեջ։ Քաղաքականությունը տալիս է պահանջվող արդյունքներ, երբ նա ճշտորեն հաշվի է առնում դասակարգերի, սոցիալական խմբերի, անհատի շահը։

«Այսօր կուսակցության տեսական մտքի կիզակետում է պրոբլեմների մի բարդ կոմպլեքս, որոնք բխում են մեր հասարակության զարգացման ժամանակակից բեկումնային բնույթից։ Արագացման բազմազան խնդիրները, նրա փոխկապվածության ասպեկտները՝ քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, սոցիալական, կուլտուր-հոգևոր և հոգեբանական, կարիք ունեն հետագա խոր և համապարփակ վերլուծության։ Մենք լուրջ փիլիսոփայական ընդհանրացումների, հիմնավորված տնտեսագիտական ու սոցիոլոգիական կանխատեսումների, խոր պատմագիտական հետազոտությունների հրամայական պահանջմունք ենք զգում»,—ասաց ընկեր Գորբաչովը։

Համագումարը դրեց հասարակական գիտությունները պրակտիկայի կոնկրետ կարիքներին լայնորեն նպատակամղելու հարցը, պահանջեց, որ հասարակագետ գիտնականները զգայուն կերպով արձագանքեն կյանքում տեղի ունեցող վերափոխումներին, իրենց տեսադաշտում պահեն նոր երևույթները, անեն այնպիսի հետևություններ, որոնք կարողանան ճիշտ կողմնորոշել պրակտիկան։

Ինչպես ընդգծեց ընկեր Մ. Ս. Գորբաչովը, կենսունակ են լոկ այն դիտական ուղղությունները, որոնք գալիս են պրակտիկայից և այնտեղ են վերադառնում խոր ընդհանրացումներով և գործնականորեն օգտակար հանձնարարականներով հարստացած։ «Սխոլաստիկան, տիրացիությունը և դոգմատիզմը միշտ էլ կապանքող են եղել գիտելիքների իրական աճի համար։ Դրանք տանում են դեպի մտքի քարացում, գիտությունը խուլ պարսպով անջրպետում կյանքից, արգելակում նրա զարգացումը։ Ճշմարտությունը ձևոք է բերվում ոչ թե դեկլարացիաներում և բանավեճերում, այլ ստուգվում է գործողության մեջ»։

Համագումարին տված Կենտկոմի քաղաքական զեկուցման մեջ և համագումարի մյուս փաստաթղթերում ամբողջ լայնությամբ և խորությամբ բացահայտվեց հասարակական գիտությունների դերը և տեղը կուսակցության քաղաքական կուրսի կենսագործման, սովետական հասարակարգի հարաճուն զարգացման բոլոր կողմերի կատարելագործման, առաջադրած հիրավի մասշտաբային խնդիրների իրականացման համար ժողովրդական զանգվածներին մոբիլիզացնելու գործում։

Այն, որ կուսակցության կողմից մշակված արագացման ստրատեգիան հենվում է հասարակական զարգացման օրինաչափության իմացության և հաշ-

վաման, պատմական փորձի ընդհանրացման, անցյալից այսօրվա և ապագայի համար դասեր քաղելու ունակության վրա, բարձրացնում է հասարակական գիտությունների դերը մեր հասարակության կյանքում, պատմական գիտության դերը մարդկային գործոնի՝ արագացման ստրատեգիայի իրականացման կարեորագույն պայմաններից մեկի ակտիվացման, հասարակության կատարելագործման գործում։ Դա իր հերթին ներկայացնում է բարձր պահանջկոտություն պատմագիտական աշխատանքների գիտական մակարդակի և գաղափարական աշխարհայացքի բովանդակության, պատմագիտական հետազոտությունների ուսումնասիրման, պատմական գիտությունների մասսայականացման, նրա ճանաչողական և ադիտացիոն-պրոպագանդիստական պոտենցիալի իրականացման նկատմամբ։

ՍՄԿԿ XXVII համագումարը սովետական պատմաբանների առաջ դրեց հետազոտությունների ակտուալացման, պատմագիտական աշխատանքների գաղափարատեսական և գիտամեթոդական մակարդակի հետագա բարձրացման, սովետական հասարակության լայն շրջաններում պատմական գիտությունների ավելի ակտիվ տարածման, երիտասարդության հայրենասիրական, ինտերնացիոնալ դաստիարակության խնդիրը։

Պրոբլեմների ակտուալացումը ժամանակագրական կարգով, ինչպես արձանագրվեց Մոսկվայում 1986 թ. հունիսի 24—26-ը կայացած պատմական գիտությունների հիմնարկների խորհրդակցությունում, նշանակում է XX դարի պատմության ուսումնասիրության նկատմամբ ուշադրության ուժեղացում։ Այս պահանջը հավասարապես վերաբերում է հասարակական զարգացման բոլոր այն ժամանակներին, որոնցից սկսվում են ժամանակակից պրոբլեմների հիմքերը, և որոնք ենթարկվում են ոչ մարքսիստական պատմագրության ենթագափոխմանը։ Իր ակտուալ նշանակությունը պահպանում է հայրենական ու համընդհանուր պատմության բոլոր կարևորագույն պրոցեսների վերլուծությունը, առանց որի հնարավոր չէ հասարակական-պատմական զարգացման օրինաչափ, ներքնապես պայմանավորված և առաջադիմական բնույթի բացահայտումը։

Պատմական հետազոտությունների գաղափարատեսական և գիտամեթոդական մակարդակի բարձրացման բնագավառում կարևոր նշանակություն է ձեռք բերում այդ հետազոտությունների կոնցեպտուալ հիմունքների ընդլայնումը և մեթոդների կատարելագործումը։ Դա իր հերթին անհրաժեշտ է հետազոտությունների աշխարհայացքային, գիտաճանաչողական և պրակտիկ-կիրառական նշանակության բարձրացման համար։

Առաջադրված հարցերի հաջող լուծումը պահանջում է առաջին հերթին մարքս-լենինյան տեսության և պատմական ճանաչման մեթոդաբանության խոր տիրապետում, պատմական հետազոտությունների արդյունքների գիտակ կիրառում պրակտիկայում, հետազոտությունների աղբյուրագիտական ինֆորմացիոն հիմունքների ընդլայնում, բնագիտական-մաթեմատիկական մեթոդների կիրառում։ Նա պահանջում է սովետական պատմաբանների ջանքերը կենտրոնացնել պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունների և ռեգիոնալ առանձնահատկությունների, սոցիալական առաջադիմության, համաշխարհային մշակույթի գանձարանում բոլոր ժողովուրդների ներդրման առավել կոնկրետ ուսումնասիրման վրա, ռասիստական, ազգայնական, շովինիստական և մյուս հետադիմական տեսությունների, սահմանափակվածության ու պարծենկոտության մերկացման, ՍՄԿԿ և եղբայրական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների գործունեության պատմական փորձի ընդհանրացման վրա, հատուկ ուշադրություն դարձնել սոցիալիստական արդարության սկզբունքների հաղթանակի, սոցիալիստական-կոմունիստական հասարակարգի կառուցման, սովետական հայրենասիրության, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի, ՍՍՀՄ և սոցիալիզմի եղբայրական ժողովուրդների բարեկամության ու համագործակցության ամրապնդման, խաղաղության ու զինաթափման համար պայքարի գիտական ընդհանրացման հարցերին։

Համագումարի տեսական գրույթներն ու գաղափարները հասարակագետներին զինեցին մոտակա և հեռանկարային խնդիրների, նրանց փոխկապվածության հստակ գիտակցությամբ։ Համագումարի բնորոշած կուսակցության հեղափոխական-վերափոխիչ գործունեության գաղափարական-տեսական հիմունքները կարևոր նշանակություն ունեն նաև հասարակագիտական հիմնարկների և գիտության աշխատողների հետազոտությունների թեմատիկայի ակտուալացման համար։ Նրանք գիտության աշխատողներին նպատակամղում են ֆունդամենտալ պրոբլեմների լուծմանը, այդ հետազոտությունները կյանքի հետ կապելուն, նրանց գաղափարական-տեսական մակարդակի բարձրացմանը։ Սովետական պատմական գիտությունը միշտ հիմնվել է մարքս-լենինյան մեթոդաբանության վրա, սերտորեն կապված է եղել սոցիալիստական շինարարության կենդանի պրակտիկայի հետ, ակտիվ պայքարել բուրժուական հետադիմական գաղափարախոսության դեմ։

Համագումարի առաջադրած խնդիրների վերլուծությունը օրգանապես կապված է պատմական պրոբլեմի ըմբռնման մարքս-լենինյան կոնցեպցիայի հետագա մշակման հետ, որն իր մեջ միավորում է անցյալը և ներկան, այսօրվա սոցիալիստական պրակտիկայի համար պատմության տվյալների ընդհանրացումը։ Առաջադրված խնդիրների լուծումից է կախված պատմական գիտության արդյունավետությունը, նրա ներդրումը կոմունիստական շինարարության որակապես նոր բնագծերի նվաճման համար համաժողովրդական պայքարում։

Համագումարի առաջադրած վիթխարի խնդիրներով է՛լ ավելի է մեծանում պատմական գիտության ներգործող և դաստիարակիչ նշանակությունը մարդկային գործոնի ակտիվության բարձրացման, մարդկանց աշխարհայացքի ձևավորման, պատմական ճշմարտության, պատմական փորձի, հասարակական զարգացման օրենքների ու հեռանկարների խոր ըմբռնման զենքով նրանց զինելու գործում։

Հայրենական պատմությունը աշխատավորության հայրենասիրական և ինտերնացիոնալ դաստիարակության հիմքն է։ Պատմությամբ դաստիարակելը պատմաբաններից պահանջում է առավել ուշադրություն դարձնել սովետական հասարակարգի զարգացման ժամանակակից էտապի ավելի բազմակողմանի ուսումնասիրմանը, սոցիալիստական համագործակցության երկրների դիրքերի ամրապնդման պրոցեսների բացահայտմանը, պատմական գիտությունը սովետական հայրենասիրության և պրոլետարական, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով աշխատավորությանը դաստիարակելուն նպատակամղմանը։ Նա պահանջում է պատմաբանների ջանքերի կոորդինացում, ուժերի ու միջոցների մագիստրալային, պրիորիտետային ուղղությունների վրա կենտրոնացում, բարձրորակ կադրերի պատրաստում, ստեղծագործական միությունների, բանասերների, գրականագետների, փիլիսոփաների հետ համագործակցության, գիտության միջմասնագիտական և միջճյուղային կապերի ընդլայնում, պատմության գծով գիտահանրամատչելի ժողովածուների, ամսագրերի, պրոբլեմատիկ գրքույկների հրատարակում, մասսայական ինֆորմացիայի միջոցներով պատմական գիտությունների լայն պրոպագանդա և մասսայականացում, ֆունդամենտալ և կոնկրետ պատմական հետազոտությունների միջև հարաբերակցության ճիշտ զուգակցում, բուհական և դպրոցական դասագրքերի, քրեստոմատիաների ստեղծման գործում ակտիվ մասնակցություն, դպրոցներում պատմության դասաժամերի ավելացում, պատմություն սիրող խմբերի ստեղծում, աշխատավորների կոմունիստական դաստիարակության ոլորտում գիտության աշխատողների լայն խավերի ներգրավում։

Հենց դրանում է կայանում պատմական գիտության համար այն արագացումը, որ պահանջում է կուսակցությունը։

Համագումարի գաղափարների զարգացման և իրականացման, հասարակագիտության նոր պրոբլեմների ծավալման և խորացման, դեպի պրակտիկայի պահանջները գիտական հետազոտությունների վճռական շրջադարձի հար-

ցերը հստակորեն դրվեցին ՍՄԿԿ Կենտկոմի «Կոմունիստ» ամսագրի մասին» վերջերս ընդունված որոշման մեջ և հասարակական գիտությունների ամբիոնների վարիչների 1986 թ. հոկտեմբերի 1-ին կայացած համամիութենական խորհրդակցությունում ընկեր Մ. Ս. Գորբաչովի արտասանած ճառում։

Կուսակցության Կենտկոմը գտնում է, որ սոցիալիստական հասարակությունը որակապես նոր վիճակի հասցնելու ՍՄԿԿ XXVII համագումարի առաջադրած խնդիրների մասշտաբայնությունը և բարդությունը պահանջում են Մարքսի, Էնգելսի, Լենինի հզոր ժառանգության բազմակողմանի յուրացման, կյանքի նոր երևույթների ուսումնասիրման, սոցիալիստական, հակագաղութային հեղափոխությունների, սոցիալիստական և կոմունիստական շինարարության, խաղաղության, ազգային անկախության, դեմոկրատիայի և սոցիալական առաջադիմության համար պայքարի փորձի, ժամանակակից գիտության ընդհանրացման հիման վրա հեղափոխական տեսության հետագա ստեղծագործական զարգացում։

Այստեղից էլ բխում են հասարակական գիտությունների խնդիրները մեր կյանքի բեկումնային ժամանակաշրջանում։ Պահանջվում է ընդհանրացրած աշխատություններում ցույց տալ լենինյան գաղափարների հաստատությունը և կենսունակությունը, նրանց հետևողական հեղափոխական բնույթը, սերտ կապը արդիականության հետ, ամեն կերպ նպաստել նոր մտածելակերպի, ժամանակի ոգուց բխող քաղաքական, տնտեսական, կազմակերպչական, գաղափարական ու դաստիարակչական գործունեության զարգացմանը, դասակարգային դիրքերից հանդես գալ մարդկային հասարակության զարգացման հակագիտական, հետադիմական հայացքների ամեն տիպի դրսևորումների դեմ։ Հասարակագետների առաջնահերթ խնդիրը համարվեց համագումարի սահմանումների, եզրակացությունների, դրույթների խորապես ուսումնասիրման հիման վրա մշակել արագացման ստրատեգիայի ամբողջ կոմպլեքսի աշխարհայացքային, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական առումները, բացահայտել սոցիալիզմի՝ որպես ժողովրդական մասսաների կենդանի ստեղծագործության մասին Լենինի հիմնարար հայացքները, մարդկային գործոնի դերը և նշանակությունը հասարակական բոլոր վերափոխումներում, սոցիալիստական կարգերի առավելությունները և հնարավորությունները էկոնոմիկայի, սոցիալական ոլորտի, դեմոկրատիայի, հոգևոր կյանքի հարստացման զարգացման բնագավառում։

Որոշման մեջ առաջ քաշվեց գիտության և պրակտիկայի մեջ դիալեկտիկական մեթոդի կիրառման հարցը, որը այսօր նշանակում է ավելի լայնորեն օգտագործել փաստացի նյութերը պատմական պրոցեսի օրինաչափությունների հիմնավորման համար, սթափ վերլուծել փաստերը, ղեկավարվել կյանքի օբյեկտիվ տրամաբանությամբ և ոչ մտացածին դոգմաներով և ստերեոտիպերով, շրջվել դեպի կյանքի բազմակերպությունը, այդ ճանապարհով հասնել մարքս-լենինյան մտքի հարստացմանը, ՍՄԿԿ և համաշխարհային կոմունիստական ու բանվորական շարժման տեսության պատմագիտական հետազոտությունների ինտենսիվությանը, կոմունիստական շարժման զարգացման օրինաչափությունների հիմնարար ընդհանրացմանը։

Այսօրվա և ապագային ուղղված անցյալի փորձի վերլուծությունը, ինչպես նշված է ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, դա և՛ տեսության անհրաժեշտ տարր է, և՛ մեթոդ, որի օգնությամբ արվում են տեսական նոր եզրակացություններ։ Այդ խնդիրների լուծումը պահանջում է անցյալի հետազոտության խնդիրների օրգանական միավորում ժամանակակից խնդիրների հետ, ապագայի խնդիրների մեջ նրա ներթափանցում։

Նշելով անցյալի փորձի, քաղաքական գործունեության արդյունքի օգտագործման անհրաժեշտությունը, Լենինը պահանջում էր պատմական փորձից վերցնել այն, «ինչ որ վաղը կամ մյուս օրը մեր քաղաքականությանը պետք կգա»։ Լենինը գտնում էր, որ «ծանրության կենտրոնը պետք է փոխադրել ոչ այնքան մեր ապրածի նկարագրության վրա, որքան փորձի այն տվյալների վրա,

որ մենք և պետք է ստանանք մեր անմիջական պրակտիկ գործունեության համար։

Անընդհատ դիմել Լենինի ստեղծագործական լաբորատորիային, նրա կյանքի վերջին շրջանի աշխատություններին, որոնցում սոցիալիստական շինարարության ռեալ պրակտիկայի առաջին փորձերի վրա տրված են խոր տեսական եզրակացություններ, գիտական աշխատություններում արտահայտել մեր ժամանակի և հեղափոխական ավանդույթների կենդանի կապը, նրանց համահնչունությունը ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումից և XXVII համագումարից հետո առաջացած ընդհանուր բարոյահոգեբանական մթնոլորտի հետ, բարձր որակական մակարդակով մշակել ֆունդամենտալ պատմա-կուսակցական պրոբլեմներ, բազմակողմանի լուսաբանել կուսակցության և ժողովրդի անցած ուղին, խորապես բացահայտել կուսակցության ղեկավար դերը հատկապես մեր երկրի շրջադարձային էտապում, կուսակցության քաղաքականության հաջորդականության և նորարարության դիալեկտիկան։ Այսօր խոր սշակսան կարիք ունեն համաշխարհային պատմական պրոցեսի մարքս-լենինյան կոնցեպցիայի տեսական ու մեթոդաբանական հարցերը, գիտության զարգացման մագիստրալային ուղղությունները, սոցիալիզմի պատմական փորձի պրոբլեմատիկան, ՍՍՀՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր կողմերը։ Պահանջվում է բազմակողմանի բացահայտել մեր երկրում սոցիալիստական վերափոխումների սկզբունքային, նորարարական բնույթը՝ հաշվանցելով սխալներն ու դժվարությունները, ռեալ իրականությանը ճիշտ գնահատական տալու և Հոկտեմբերի գծած ճանապարհով երկիրը առաջ տանելու կուսակցության ընդունակությունը։

Հայաստանի պատմաբանների հետազոտությունները հենվել ու հենվում են ՍՍՀՄ պատմության ընդհանուր կոնցեպցիայի վրա, որը ելնում է մեր ժողովուրդների պատմական բախտի ընդհանրությունից, նրանց միջև տնտեսական, քաղաքական, կուլտուրական դարավոր կապերի, սոցիալական ու ազգային ճնշման դեմ տարբեր ազգերի աշխատավորների համատեղ պայքարի ավանդույթներից, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի, սոցիալիզմի կառուցման և կատարելագործման համար պայքարի ընդհանրությունից։

Մեր պատմաբանների ուսումնասիրությունների առաջնահերթ պրոբլեմներն են եղել հայ ժողովրդի բազմադարյա պատմության, սոցիալիստական և կոմունիստական շինարարության, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական հասարակարգերի գենեզիսի և պատմության, հայ-ռուսական հարաբերությունների և հայկական գաղթօջախների, հայ հասարակական մտքի, պատմագրության և այլ հարցեր։ Պատմաբանների ձեռք բերած հաջողությունները հնարավոր դարձրին ավարտել հայ ժողովրդի պատմության ընդհանրացնող, ամբողջական, ութ հատորով աշխատանքը։ Դա միաժամանակ հնարավորություն տվեց եբեան հանել և այն պրոբլեմները, որոնք գեռես բավարար ուսումնասիրված չեն և կարիք ունեն խոր հետազոտության։

Ստեղծվեցին առաջին աշխատանքները նվիրված Սովետական Հայաստանի ժամանակակից էտապի բանվոր դասակարգի ու գյուղացիության պատմությանը, ավելի խորությամբ ու լայնությամբ հետազոտվեցին սովետական իշխանության համար պայքարի, ժողովրդական տնտեսության վերականգնման ու վերակառուցման, մշակույթի ու գիտության պրոբլեմները, Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության հարցերը։ Հայ-ռուսական տնտեսական, քաղաքական, կուլտուրական կապերի և հարաբերությունների պատմության մշակման արդյունքը եղավ փաստաթղթերի ժողովածուների և մի շարք արժեքավոր մենագրությունների հրատարակումը։ Այդ թվում՝ հայ-ռուսական պատմական հարաբերությունները XVIII դարում փաստաթղթերի և նյութերի ժողովածու, մենագրություն՝ Անդրկովկասում և Հայաստանում դեկաբրիստների գործունեության մասին։ Լուծված խոշոր պրոբլեմների մեջ են Արևելյան Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացման, պրոլետարիատի պատմության, Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու

քաղաքական կյանքի, հին և միջին դարերի Հայաստանի պատմության, պատմագրության, Հայաստանի մասին օտար աղբյուրների, մամուլի պատմության և հայ պարբերական մամուլի լրիվ մատենագրության կազմման, Ռուսաստանում և Եվրոպայի երկրներում հայ գաղթօջախների պատմության բազմաթիվ հարցեր։

Կուսակցության XXVII համագումարի և Հայաստանի կոմկուսի XXVIII համագումարի փաստաթղթերի ոգով պատմաբանների աշխատանքները այժմ կենտրոնացվում են հետազոտությունների պրիորիտետային ուղղությունների վրա։ Այսօր մեր գլխավոր խնդիրը հայ ժողովրդի պատմության ռուսերեն լեզվով քառահատոր-յակի ստեղծումն է, որտեղ իրենց արտահայտությունը կգտնեն սովետահայ պատմագրության նվաճումները։ Այդ աշխատանքներին ներգրավված են Երևանի պետական համալսարանի, Մաշտոցի անվան Մատենադարանի, ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության, հնագիտության և աղգագրության, գրականության, արվեստի, տնտեսագիտության ինստիտուտների, Մոսկվայի, Լենինգրադի առաջատար գիտնականներ։

Նախատեսված է մինչև 2000 թ. խորությամբ մշակել այնպիսի պրոբլեմներ, ինչպիսիք են սոցիալիզմի կատարելագործման ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի պատմությունը, բանվոր դասակարգի, գյուղացիության, ստավորականության պատմությունը, ստեղծել «Մեծ հոկտեմբերը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» փաստաթղթերի ժողովածու և մի շարք աշխատություններ, որոնցում կարտացոլվեն Հայաստանում և Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակի համար աշխատավոր զանգվածների պայքարը, ժողովածու հայ ժողովրդի պատմության բուրժուական պատմագրության նենգափոխման դեմ։ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի հետ կհրատարակվի «Հայկական ՍՍՀ-ն Հայրենական մեծ պատերազմի տարիներին» եռահատոր աշխատությունը, Երևանի պետական համալսարանի հետ՝ «Հայ գաղթավայրերի պատմությունը» երկու հատորով, Հայկական ՍՍՀ մինիստրների խորհրդին առընթեր արխիվային գլխավոր վարչության հետ՝ «Հայաստանի արդյունաբերությունը և բանվոր դասակարգը» փաստաթղթերի եռահատոր ժողովածու։ Ինստիտուտը հրատարակության կնախապատրաստի «Հայ պարբերական մամուլի պատմությունը» երեք հատորով, «Հայկական աղբյուրները հայ-ռուսական հարաբերությունների մասին (IX—XVIII դարերում)» երեք հատորով, «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարում» երկու հատորով, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը և Ռուսաստանը», «Օտար աղբյուրները Հայաստանի մասին» մատենաշարի շարունակությունը։

Խորապես կուսումնասիրվեն հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, հայ-ռուսական հարաբերությունների, Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալների, ազգային ոչ պրոլետարական կուսակցությունների, հայկական գաղթօջախների և սփյուռքահայության պատմության պրոբլեմները։ Հետևողականորեն կշարունակվի դաշնակցության նացիոնալիստական գաղափարախոսության, նրա հակասովետական գործունեության ու քաղաքականության մերկացումը։

Մեծ ուշադրություն կդարձվի սոցիալիստական հասարակության կատարելագործման, արդի փուլում դասակարգերի ու սոցիալական խմբերի մերձեցման, ազգային հարաբերությունների կատարելագործման, երկրի բոլոր ազգերի ու ազգությունների եղբայրական բարեկամության ամրապնդման պրոբլեմների ուսումնասիրությանը։

Բազմակողմանի լուծման կարիք ունեցող հարցերի ամբողջական շղթայում այսօր կարևոր տեղ է գրավում հայ ժողովրդի ծագման հարցը, հատկապես վերջին շրջանում առաջացած հնդեվրոպական ցեղախմբերի՝ Հայկական լեռնաշխարհում տեղադրման տեսության կապակցությամբ։

Անհրաժեշտ պահանջ է դառնում ՍՍՀՄ, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտների՝ աշխատանքների կոորդինացումը

առանձին առանցքային հարցերի համատեղ լուծման համար։ Ի դեպ, այդպիսի աշխատանք արդեն սկսել ենք «Օտարերկրյա ինտերվենցիայի կրախը Անդրկովկասում 1918—1920 թվականներին» և «Կովկասի պատմական ատլասը հնագույն շրջանից մինչև XIX դարը» պրոբլեմների զծով։ Այս փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է այնպիսի անմիջական կապերի ընդլայնումը, ինչպիսիք են միասնական ծրագրի և մեթոդի հիման վրա միութենական և հանրապետական ռեգիոնալ նշանակություն ունեցող կոլեկտիվ աշխատանքների ստեղծումը, պատմաբանների ռեգիոնալ աշխատանքների կոորդինացումը։

Նման կոլեկտիվ աշխատանքների ստեղծումը կնպաստի արմատախիլ անելու առանձին անհատների կողմից ոչ դասակարգային դիրքերից փաստերին ու երևույթներին մոտենալու տենդենցը և պատմության մեջ սուբյեկտիվ դիրքերից այսպես ասած «ճշտումներ» մտցնելու միտումները, վերջ կտրվի՝ պատմական ժառանգության շրջանցման կամ ժխտման, իրենց ժողովուրդների պատմությունը արհեստականորեն «հնացնելու», հարևան ժողովուրդների պատմության ու կուլտուրայի հակադրման փաստերին։

Այս հարցերը ամբողջ սրությամբ դրվեցին պատմական գիտության ղեկավար աշխատողների հուլիսյան խորհրդակցությունում։ Ընդունված որոշման մեջ որպես անթույլատրելի գաղափարական-տեսական և մեթոդաբանական վրիպում նշվեցին որոշ դեպքերում պատմության անհիմն հնացման, «մեր երկրի առանձին ժողովուրդների պատմության ու կուլտուրայի հակադրման փաստերը, մի շարք դեպքերում, տեղական մինչհեղափոխական պատմագրությունից եկող, տարբեր հանրապետությունների պատմաբանների անհիմն վեճերը հարևան ժողովուրդների հին ու միջին դարերի պատմության հարցերի կապակցությամբ»։ Խորհրդակցությունը նշեց, որ համատեղ աշխատանքը և աշխատանքների կոորդինացիան կնպաստեն հետազոտությունների արդյունավետության բարձրացմանը հասարակության պատմական զարգացման պրոբլեմների բոլոր հարցերի գնահատման ժամանակ, ինչպես նաև գաղափարական-աշխարհայացքային պրոբլեմների մշակման նկատմամբ դասակարգային դիրքերից վերլուծական մոտեցման խորացմանը։

Լենինից եկող մեր կուսակցության ավանդույթն է՝ առանձնակի ղդայունությունը և շրջահայեցությունը այն ամենի մեջ, ինչը վերաբերում է ազգային հարցին, շոշափում է յուրաքանչյուր ազգի և ազգության շահերը, ուրդկանց ազգային զգացմունքը և միաժամանակ սկզբունքային պայքարը ազգային սահմանափակվածության և սնապարծության, նացիոնալիզմի-շովինիզմի դրսևորման դեմ ինչպիսի ղեստ էլ որ դրանք կրեն,—ասաց Մ. Ս. Գորբաչովը համագումարում։—Մենք կոմունիստներս, պետք է անշեղորեն հետևենք լենինյան իմաստուն պատգամներին, դրանք ստեղծագործաբար կիրառենք նոր պայմաններում, անսահման ուշադիր, սկզբունքային լինենք ազգային հարաբերություններում՝ հանուն Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության բոլոր ժողովուրդների եղբայրության հետագա ամրապնդման։